

33 Յայնրմ վայրի, զառազանքան.
Աշէքսանդրոր որ Բիւզանդեան,
Կաթուղիկոսն Արարատեան,
Զըւէր անտի տա. վայրն իջման:

34 Ու եւ ընդ իւր տանէր տնգամ,
ցնւգոկիւղ քաղաք յայնժամ,
Ըգքեռիս իմ Տէր Աբրահամ,
Զերթ ուղեկից եւ բարեկամ:

35 Անտի քեռիս գառ ի վնհէն,
ՅԱմբիթ քաղաք դարձեալ անդրէն,
Պատուիր յողջոյն իւրմէ հօտէն,
Քաջ եւ հըսկօլ հովուի զօրէն:

36 Նա զի համառ մայր իմ Մարթա,
Թողեալ յաստիս զիս եօթնամեայ,
Փոխեալ էր առ կեանս մըշտակայ,
Զարգանայի առ քեռս ապա:

27 Եւ մինչ էի իւր եօթնամեայ,
Վարժեալ փոքր ինչ լընթերցարան,
Բընակէի ես յօթարան,
Աբրահամու քեռւոյս արժան:

38 Անդ եւ ի բերձ վանս Արղընւոյ,
Ոչ կանէի լընթեռնայ,
Ուր եւ զըպիր եղէ յետոյ,
Նստայելով եկեղեցւոյ:

39 Ապա ըզպէտս հագւոյն վճարեալ,
Փոխիր յաստեայ հայր իմ սիրեալ,
Որ ուղղափառն էր թափուցեալ,
Զի ի նեղաջ կայր զտփուցեալ:

30 Որ զաւուրս իւր միշտ համբուրեայ,
Ըզդառնութիւն կուռ փորձեալ,
Եւ մեծ սովու միջադիւրեայ,
Զվերջին բաժակ լեղւոյն փորձեալ:

31 Բետոյ քեռիս յամին հազար,
Եօթն հարիւր որ միանայր,
Ընդ վաթճանորդ երողդ համար,
Գրուիր մահու շապրեալ յամայր:

32 Եւ զի վաղման օդն իմ քեռւոյ,
Դիպիր ի վանս իսկ Արղընւոյ,
Ուստի թաղիւր մերձ հօր իւրոյ,
Անգ առ զբրան եկեղեցւոյ:

33 Այն զի քեռիս զթով սրտին,
Դաստարակ զճտա իմ անձին,
Վանս այն զանուն հօրս յարկին,
Թողեալ՝ առ ի վճեռւոյս Նուրաին:

34 Ի նոյն վայրի հնքն Յավակիմ
Որ էր նմիրակ ի գաւառն իմ,
Սուրբ Յակոբայ որ ի Սաղիմ,
Գաւթ ցաւցանէր ի վերայ իմ:

35 Եւ յարէր զիս յիմ նահանգ,
Սուրբ Գաղաթին տեման փափաք,
Երբեք եղէ իսկ Սարկաւաք,
Ի Դամասկոս մայրաքաղաք:

36 Ընդ որ յետոյ անուստ ելի,
Յեքրուսաղէմ յաւառ ուրբ շէրմի,
Իտնտի ի մեծ Պոյիս եկի,
Որպէս ի վեր անգր ասոցի:

ՕՐԹԱՔԷՕՑ Կ. ՊՈԼՍՈՑ

13 Յունիս 1906

4. ՆՍԱՎԱԿ Ք. ՍՐԱՊԵՆԱ

Միաբան Անտոնեան:

ՎԵՐԸ:

1720—1775.

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ. ՍԱՐԱՓԵԱՆ

Ե Ի Ի Ի Դ Ե Մ Ե Ն Ա Կ Ը

Յնդեկոյթիւնը:

Երբ Բարգէն Վ. ի հրատարակած «Եւ-
հանէս կողմ Պատրիարքի կենսագրութիւնը»,
(Վիեննա 1904) կարգացի, մտադրութիւնս
գրուեց կողմի աշակերտներէն նշանաւոր ան-
ձնաւորութիւն մը, Սարգիս Վ. Սարափեան, վա-
ղուց ծանօթ գրեթէ միայն իր հրատարակու-
թիւններովն, երբ մանաւանդ անոր մանրամասն
կենսագրութեան գոյութիւնը կը ծանուցանէր
բանասէր վարդապետը (էջ 202, 218): Ան-
տարակոյս շատ նոր տեղեկութիւններ ամփոփած
պիտի ըլլար սոյն կենսագրութիւնը՝ Սարգիս եւ
իւր ժամանակին գեպքերուն վրայ:

Այս կենսագրութիւնը կը պահուի Անտո-
նեան Յարգելի Միաբանութեան Միջադիւղի
(Կ. Պոլիս) վանքը: Իմ խնդրանքս՝ եւ բարեհաճ
թղթաւորութեամբ աշուտափա գերապայծառ
Աբրահամ Գեղայ. Միասէրեան Հ. Ռաֆայէլ Թ.
Վ. ի վանքին արգիւնաւոր Մատենադարանա-
պետն ու Դիւանապետը՝ Գեղ. Հ. Իսահակ Ք.
Սարգեան, յանձն առաւ սոյն կենսագրութիւնն
ընդօրինակել եւ տպագրութեան սրբագրու-
թիւնները հոգաց ամենայն խղճմտութեամբ:
Կենսագրութիւնս հրատարակուեցաւ «Հանդէս
Ամսօրեայ» ի 1906, 205, 250, 325. եւ
1907, 7, 47, 76, 109, 169, էջերուն մէջ:

Սոյն կենսագրութիւնը տպագրութեան
տալու ժամանակ՝ զիտաւորութիւնս էր ինծի
մատչելի վաւերագիրներով անոր ստուգութիւնը

փորձի տակ դնել, եւ Սարգսի Հնա՝ նաեւ Ժա-
մանեակակից եւ կենակից հայ կաթողիկեայ եկե-
ղեցական անձնաւորութեանց քանի մը հատին
կեանքն հետազոտել, ի լոյս հանել ինչ որ ծառ-
կուած կար այս մասին: Ուրախ եմ որ կարող
պիտի ըլլամ առաջիկայ աշխատասիրութեան
մէջ շատ նորութիւններ, շատ անձնաւորութիւն-
ներ կերակայացընել, միշտ յեցեալ վաւերագիր-
ներու: Բայց պատմական չոր իրողութիւնէ ան-
դին խորհրդածութիւններու կամ անձնաւորու-
թիւններու առանց անցնելու:

Այս նպատակաւ աչքի առաջ ունեցայ
շատ վաւերագիրներ եւ քանի մը ապագրու-
թիւններ, որչափ միջավայրս կը ներկեր:

1. Անտոնեան Թարգոյ Միտրանութեան
Դիւանն ու Մատենադարանը մատչելի եղաւ ինձ՝
շնորհիւ Գեր. Է. Ի. Սրապեանի: Ինչ որ այս-
տեղէն քաղեցի, առաջիկայ գործիս մէջ կը նշա-
նակուի: "Դիւ. Անտ.", եւ "Մանգրն. Անտ.":

2. Իսաւրիյ լիճոնոյ քաղաքին կաթողի-
կեայ Հայոց Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ
Դիւանը 73 կտոր վաւերագիր գտնուեցաւ Սար-
գիս Արքեպօսի վերաբերելով, զոր եկեղեցւոյն
Գերդ. Մենեաւոր՝ Գր. Ծ. Վ. Պահապանեան
ամենայն ազնուութեամբ իմ արամագրութեան
տակ դրաւ, եւ Սարգսի գերեզմանի մասին պէտք
եղած տեղեկութիւններ առաւ: Գործոյս մէջ
կը նշանակեմ՝ "Դիւ. լիճ.",

3. Վենետիկի Միսիթարեան Թարգոյ Միտ-
րանութեան օգնական Մատենադարանապետ
Գեր. Է. Մկրտիչ Պոստոլեան, աշխի միշնոր-
դութեամբ Գեր. Է. Աթանաս Վ. Տիրոյեանի,
հաճեցաւ Սարգսի աւ Միսիթար Արքայ գրած
ինը նամակներու օրինակը զրկել, եւ անոր հրա-
տարակութիւններէն հինգին վրայ տեղեկութիւն-
ներ առ ըստ ինդրանցս: Գործոյս մէջ կը
նշանակուի՝ "Դիւ. Միսիթ. Վենետ.":

Այստեղ իմ մասնաւոր շնորհակալու-
թիւններս կը յայտնեմ վերոյիշեալ Գեր. Անձ-
նաւորութեանց, որոնք ամենայն հպատակութեամբ
օգնեցին ինձի եւ գործոյս կատարելութեան
զլխաւոր սատարներն եղան:

Տպագիրներէն գործածած, համեմատած
եւ ուղղագրած եմ՝

1. Չափեալ Է. Մ. Պատմ. Հայոց, Գ.
Հարս, Վենետ. 1786: Գործոյս մէջ նշանա-
կուած՝ "Չափեալ.":

2. Ուշաբլի՝ Մ. Վ. Պատմ. Հայոց գաղ-
թականութեան, ի լիճոնոյ, Վենետ. 1891:
Նշանակուած՝ "Ուշաբլ.":

3. Տաշիւ Է. Յ. Յուցակ հայերէն ձեռա-
գրաց Մատենադարանին Միսիթարեանց ի Վիեն-
նա: Վիեննա 1895: Նշանակուած՝ "Տաշեան.":

4. Այնլե Է. Վ. Հայ-Վենետ. Վենետիկ
1896: Նշանակուած՝ "Հայ-Վենետ.":

5. Աստուր Էրանտ, Կ. Պոլսոյ Հայերը եւ
իրենց Պատրիարքները, Ընդարձակ Օրացոյց աղ-
գային Հիւանդանոցի, Կ. Պոլսի 1901, էջ 77—
258: Նշանակուած՝ "Ընդ. Օր.":

6. Բաբէլ Վ. Կիւիէսերեան, Կոլոտ Եովհ.
Պատրիարք, Վիեննա 1904: Նշանակուած՝ "Կու-
լոտ.":

7. Նոյն, Յիշատակարան Գրիգոր Պա-
տրիարքի Պատմաձեան, "Բանասեր, Փարիզ,
1905: Նշանակուած՝ "Յիշակար.":

8. Արեւադէմ Անգրի Գեր. Համառոտ
Պատմ. Երկուստան Կաթողիկոսաց, Վենետ.,
1906: Նշանակուած՝ "Աղբաւնդրեան.":

9. Նոյն, Համառոտ Պատմութիւն Եպիս-
կոպոսական Վթողոյ ի Պատրիարքութեան Կիլի-
կիոյ Վենետ., 1906: Նշանակուած՝ "Աղբաւն-
դրեան Ա.":

Նաեւ 10. Արեւադէմ Ստեփ. Եպ. Պատմ.
Գաղատիոյ հայ կաթողիկեայ հասարակութեան,
գրուած՝ 1810, ընդօրինակուած Աւաքեցեան
Կրպտ. Եպ. Է 1882 թ Կ. Պոլսի, Հայաստան տաճ-
կերէն, ձեռագիր "Նշանակուած՝ "Աւաքեց.",

11. Սարգիս Գալի Սարգի Յովհաննիսեան,
ազգային պատմութեան վերաբերեալ քանի մը
ձեռագիրներ, գրուած 1760—1807, զորոնք
աշխի բարեկամն Մեն. Տր. Վ. Էփ. Թորգո-
մեան արամագրութեանս թողուց: Կը յայտնեմ
իրեն խորին շնորհակալութիւնս: Նշանակուած
է՝ "Սարգ. Գալ.":

Ասոնցմէ զառ անցողաբար գործածուած
ապագրութիւնք, դիւանք եւ նշանակուած են
իրենց տեղը:

Սարգիս Արքեպ. Սարգիսեանի կենսագրու-
թիւնը մահուանէն ետեւ՝ 1789ին ոտանաւոր
գրած է իր ձեռնասուն աշակիրտն Յովհ. Վ.
Նուրախեան, որուն մի միակ սկզբնագիր օրի-
նակը կը գտնուի ի Դիւ. Անտ., ինչպէս Նուրա-
խեանի ուրիշ գրութեանց եւ նամակաց գրեա-
լուն համեմատութեամբ ստուգած եմ: Գոր-
ծոյս սկիզբը գրած եմ զայսքով ամենայն ճշգրտ-
ութեամբ, միայն տները թաւագրած եմ:

Աշխատասիրութեանս մէջ պահած եմ
այն բնագրին տաւն Երգերու կամ Գլուխներու
բաժանումը, պատմական կէտերն ամբողջ, լու-
րով անոր խորհրդածութիւններն ու գաղաղուս

Թիւնները: Անոր աւանդածներն ընդարձակած եմ ուրիշ աղբիւրներէ, եւ ժամանակակից հայ կաթողիկէայ եկեղեցական անձնաւորութեանց վրայ կենսագրական տեղեկութիւններ ըստ պատշաճի գետեղած եմ: Եթէ տառով պատմութեան ընթացքն երբեմն կ'ընդհատի՝ ուրիշ անձանց միջամտութեամբ, այն գիտմամբ եղած է: Գաւառականից հայ կաթողիկէայ մէկ քանի անձանց եւ գիպաց վրայ աւանդուած եւ մանաւանդ անծանօթ մնացած տեղեկութիւններն ամփոփել ուզած եմ. որոնցմէ գեղ շատ ունիմ, թողած ուրիշ ժամանակի վերաբերեալ գործերու մէջ աւանդուելի:

Կենսագիր Նուրախեան Յ. Վ. իր մասին մանրամասն տեղեկութիւն կու տայ իր այս գործին մէջ՝ «Երգ առանձին, բաժնով, զորոնք այստեղ կը համառօտեմ»:

Յովհ. Վ. Նուրախեան ծնած է 1747ին Տիգրանակերտ, հայրն էր Սահակ Քօսեանց, մայրը Մարթա՝ ծնեալ Նուրախեան, որոնք իրենց ծննդավայր Բաղիշէն գաղթած էին՝ Կորուաց (Քիւրտերու) երեսնէ փախչելով: Եւնուզքն հարուստ եւ բարեհամբաւ էին: Յովհաննէս եօթնամեայ էր երբ մայրը վախճանեցաւ. իսկ հայրը վախճանեցաւ իբր 1755ին, որ դաւաճութեամբ ուղղափառ կաթողիկէայ էր, բայց նեղւաց վախէն ծածուկ կը պահէր:

Յովհաննիսի մօր Մարթայի հայրը՝ Յակոբ Նուրախեան քահանայ էր, եւ իր դեռտառի կնոջ աւհուանէն ետեւ, Բաղիշն խոռվութեան ժամանակ, իր Աբրահամ որդւոյն հետ Ամրգուլու Ս. Յովհաննու վանքն առանձնացաւ: Հոն թէ ինքն եւ թէ որդին առում առնելէն ետեւ՝ միասին վարդապետական կարգ, գաւազան եւ վեղար առին: Յետոյ երկուքը էջմիածին ուխտի գացին, եւ միասին նուիրակ զընկուեցան Աղուանից աշխարհը: Սոյն պաշտօնը լաւ կատարեցին, եւ ի գարձին՝ Կաթողիկոսն երկուքը մէկտեղ եպիսկոպոս ձեռնադրեցին. քանի մը տարի ետքը միասին Երուսաղէմ ուխտի գացին, ուր Գրիգոր Շլիմայակիր Պատրիարք (ընտր. 1716—1749 փետր. 12 ի) մեծ պատիւ եւ ընդունելութիւն ըրաւ իրենց, եւ զիրենք իր եպիսկոպոսաց գասուն մէջ առաւ: Քիչ ետքը Պատրիարքը զիրենք Ս. Յակոբայ նուիրակ կարգեց ուսանական երկիրներու, մանաւանդ Աժտարխանու:

Գրիգոր Պատրիարքի մահուանէն ետեւ՝ այս երկուքն, հայր եւ որդի, Յակոբ Նալեան Պատրիարքի օրով (15 փետր. 1741—1749, Մարտ 26 ի) Կ. Պոլիս գացին, Պատրիարքէն մեծ

պատուով ընդունուեցան եւ քիչ մ'ատեն հոն մնացին: Այնտեղ արքունի պաշտտան ուղեօրէն պապեա իր քյոյը Յակոբ Եպ.ին եղբորը առաւ, եւ անոր աղգեցութեամբ՝ Յակոբ Եպ. Առաջնորդ անուանուեցաւ Տիգրանակերտի, իբրեւ յաջորդ Առաջնորդ Պետրոս Եպ.ի: Իբր հինգ տարի ետքը ծերանի Յակոբ Եպ.ի՝ Ժողովուրդեան հաւանութեամբ ամբոն իր որդւոյն՝ Աբրահամ Եպ.ին յանձնեց, եւ Արղիշ Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանքն առանձնացաւ, ուր քիչ ետքն առ Աստուած փոխուեցաւ:

Աբրահամ Եպ. գնաց Կ. Պոլիս եւ Տիգրանակերտի առաջնորդութեան հրովարտակն առաւ: Նոյն միջոցին (1754) Կ. Պոլսեցի Աղեքսանդր Նորմանի Սաթրապի կողմէն Պատրիարքեան Կ. Պոլսէն էջմիածին կը մեկնէր, հետեւ առաւ Աբրահամ Եպ.ն իբրեւ բարեկամ եւ ուղեկից. Եւգոկիա իրարմէ բաժնուեցան, եւ Աբրահամ հասաւ Տիգրանակերտ: Ինը տարի լաւ հովուելէն ետեւ՝ 1763ին վախճանեցաւ Արղիշայ վանքը, եւ եկեղեցւոյ դրան մօտ՝ հօրը քով թաղուեցաւ:

Յովհաննէս մօրը մահուանէն ետեւ՝ իր քեռւոյն՝ Աբրահամ Եպ.ին խնամոց տակ էր, եւ երբ եօթ տարեկան եղած առնէն հայրն ալ վախճանեցաւ, Աբրահամ զինք քոյն առաւ, եւ Արղիշ Բարձրահայեաց վանքը Յովհաննէս ուսման կը պարապէր եւ զպիւր եղաւ: Աբրահամը մահուանէն ետեւ՝ թողուց Յովհաննէս իր հօրը՝ Քօսեանց, մականունը, եւ քեռւոյն՝ Նուրախեան, մականունն առաւ, վասն զի քեռին իր հօգեւոր եւ մօրմուտը գաւազան եղած էր:

Այս միջոցին Երուսաղէմէն Տիգրանակերտ նուիրակ եկած էր Յովակիմ Եպ. Քանաքեռցի, որ վերջէն Երուսաղէմայ Պատրիարք եղաւ (2 օգ. 1775—1793 Սեպտ. 25 ի): Յովակիմ զթաց այս որբ պատանւոյն, հետեւ առաւ, դաւ մասկոսի մէջ Սարկապք ձեռնադրեց, եւ Երուսաղէմ տարաւ: 1765ին Յովակիմ Եպ. իբրեւ Ղէօն Երուսաղէմի՝ Կ. Պոլիս եկաւ, հետը բերաւ Յ. Նուրախեան սարկապքը, որ վնց ամիս անոր քով մնալէն ետեւ՝ զատուեցաւ եւ մնակեցաւ եղբորը քով, որ շատ տարիներէ վեր իր աղագականաց հետ Կ. Պոլիս հաստատուած էր: Աղուահայց օրերը շատ վարդապետներու քարոզները լսեց Յովհաննէս, բաղձաց նաեւ Ստրգիս Արքեպ. Սարաֆեանի քարոզներուն ներկայ ըլլալ, որուն համարը լսած էր՝ իբրեւ անուանի բարոյզ եւ մեկնիչ Ս. Գրոց, գիւրուսոյց պարզամտաց: Յովհաննէս ստեպ Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ կ'երթար քարոյզի, որով ծանօթա

ցաւ եւ բարեկամացաւ Սարգսի: 1766ին գարնան խնդրեց Սարգսէն, որ զինք իբրեւ աշակերտ քովն առնու: Ամիս մ'ետքը՝ Միջագիւղ Սարգսի բնակարանն հաստատուեցաւ: միջնորդութեամբ Պետանեան վարդապետի, Հոն երեք տարի աշակերտելէն ետեւ, հաւանութեամբ Գրիգոր Պատրիարքին՝ Սարգիս զԵովհանէս քահանայ ձեռնադրեց 3 Ապր. 1769ին ի տօնն: «Մուսն ի վիրապն», եւ Նոյն օրը կրօնաւոր կամ արեղայ ըրաւ տալով «վեղար՝ փիրն ապա», Այս ձեռնադրութեան ժամանակ քորոր ազգին առջեւ շիշատակուեցան ծանօթ նշովքները, եւ անքն գունդները (Ցաթեւացի եւն): Ըստ թովորութեան՝ երեք ամիս ետքը հրաման տուաւ Սարգիս, որ Նուրտինեան քարոզէ:

Յովհ. Վ. Նուրտինեան 1772ին Սարգսին հետ խտաւոր գնաց, Սարգսի տնակէն ետեւ իջվոռնոյ հաստատուեցաւ, 1789ին անոր կենսագրութիւնը գրեց, ինչպէս նաեւ անոր առաւելագիրը: Ունի ոտանաւոր նամակ մը (Գիւ. Անտ.) քրտե 3 Մայիս 1790, առ Ստեփ. Վ. Աթիմանտիլեան, Եպ. Աստղիկայի, Չեռնադրիէ ի Հռոմ (1785—1795), որով կը ծանուցանէ, թէ քույրացի խոճամալ Սափար մեծահարուստը Հնդկաստանէն իջվոռնոյ եկած է, եւ Նուրտինեանի հետ կրօնական վէճեր ընելէն ետեւ՝ համոզմամբ կաթողիկէ հաւատքն ընդունած է:

Նուրտինեան մեռած է 56 տարեկան՝ 6 փետր. 1803ին, եւ թաղուած է իջվոռնոյ, Ունի կտակ մը, որով իջվոռնոյ քաղերին համար քանի մը բարեգործական արամագրութիւններ ընելէն ետեւ՝ ստացուածոց ժառանգ կը գնէ Կ.Պոլիս բնակող իւր եղբորորդին Մուրաա Նուրտինեանը, իսկ գրքերն ու գրութիւնները կը թողու Անտանեան Միաբանութեան վանքին (Գիւ. Աթի.), ուր եւ կը մնան Սարգիս Աբբ. Սարաֆեանի գրոց հետ, զորս ժառանգած էր Նուրտինեան Վ.:

* * *

Աշխատասիրութիւնն անշուշտ պիտի ընդարձակէ քննասէր, եկեղեցասէր, պատմագէտ եւ հնարաս ընթերցողներու ծանօթութիւնը, եւ հայ կաթողիկոսայ հասարակութեան ժեղատու նշանաւոր մէջ քանի եկեղեցականաց կենսագրութիւնը ծանօթացընելով՝ ազգին Նոյն մասին հետզհետէ կազմակերպումը պիտի ներկայացընէ:

1

Սարգսի ծնունդը, պատանեկութիւնն եւ աշակերտին Յովհաննու Նորտի:

Անցիկ Ալեքսան կամ Ալեքսանդր Խոբէն (յուսայափոխին) 1698ին Կ.Պոլսոյ մէջ ամուսնացաւ Պոլսեցի Թագուհւոյ հետ Թագուհի իւր անդրանիկն ի Կ.Պոլիս յղանալէն ետեւ՝ երկուքն ալ գործով Ազրիանուպոլիս փոխադրուեցան: Այստեղ 1699ին, փետրուարին, Առաջաւորաց պահոց մէջ ծնաւ իրենց անդրանիկ որդին, որ եւ Ս. Սարգսի տօնին շարաթ օրը մկրտուեցաւ, գործուեցաւ եւ կուուեցաւ Սեբէ: Ծնողքն անմիջապէս Կ.Պոլիս գարձան, ուր մանուկն Սարգիս զարգացաւ օրըստօրէ, եւ յանձնուեցաւ երիցու մը յաշակերտութիւն: Սարգիս քիչ առնէն Սաղմոս, փետրուարին, ժամագիրք եւ Հարական սկսաւ կորդալ եւ եկեղեցւոյ մէջ դպրութիւն ընել:

Ծննդեան եւ պաշտաման պարագաներէն առեալ՝ Սարգիս յետոյ Սեբէն (կամ Սառաֆեան), Ալեքսանդր, Ալեքսանդրեան, Բեռլին, Բեռլին, Բեռլին, Կոնստանդնուպոլսէն, եւ Կոնստանդնուպոլսէն ետեւ: Պէտք չէ շփոթել մեր Սարգիսը, միւս Սարգիս Վ. Կոնստանդնուպոլսեցւոյ հետ, որ կը յիշուի ի յիշատակարանի՝ Գրիգոր որ կուի Հարանց վարքը, Կ.Պոլ. 1720—1. «Յիշել... զամենայն միաբան աշխատաւորս, եւ զբարեմիտ սպասաւորս սուրբ տեղեացն այսինքն զՍեբէն խորհրդեալ Բեռլին, Կ.Պոլսոս Վ. Եւրպոլիսցի... որք շրջին ի դրունս ողորմածաց՝ առ ի հաւաքել զուրար, սակս սուրբ տեղեացն եւ Սուրբ Յակոբայ գահին...»

Չափահաս ըլլալէն ետեւ Սարգիս՝ ոսկերչութեան արուեստին աշակերտեցաւ: Սակայն ասկէ համ չառնելով՝ ուզեց եկեղեցական ուսմանց հետեւիլ եւ քարոզներու ներկայ գտնուիլ: Այս ժամանակի Կ.Պոլսոյ Հայոց Պատրիարքն Յովհաննէս Բաղիշեցի կոլաւ (նստած 9 Սեպտ. 1715, ըստ Բարդէն Վ. Թոմ. էջ 173, Ծան. 2: Սարգիս դպիր Յովհաննիսեան իւր մէկ ձեռագիրին մէջ կը գնէ Սեպտ. 7) իր հիմնարկած դպրոցին մէջ աշխատանքները կը ժողովէր եւ կ'աւտացանէր: Սարգիս այս աշակերտաց զարգացումը տեսնելով՝ ուզեց անոնց դասակցիլ. սակայն հայրը՝ որուն մի միակ արու գաւաթն էր Սարգիս, բացարձակ ընդգրկմանց առօրէ: Բայց յետոյ տեսնելով որ անկարելի է զինք ետ կեցընել՝ վերջապէս հաւանեցաւ, եւ Սարգիս 20 տարեկան ազնիւ պատանին, որ արդէն իբրեւ

դպիր՝ Սուրբ Կարգի շորս փոքր աստիճաններն ընդունած էր, խանութն ու ոսկեզէնները ծախեց, գոյացած գումարն կէսը դարձուց Տօրը՝ որ դրամագլուխը գրած էր, միւս կէսն իրիւս իւր վաստակն անձին պահեց, եւ 1719ին մուսկատարարքական դպրանոցը:

Ձ.

Սարգսի վարդապետ ծննդադրուիլը, քարոզչութիւնը, Կեսարիոյ Սոսլոնոգ ընտրուիլը, Ս. Կարապետի վանքին պարտքն հատուցանելու համար մինչեւ Ստանա եւ Բոքիա Մուրհասաւարութեամբ շրջիլը, եւ եպիսկոպոսանալու համար Կարսոյ վրայէն Էջմիածին ուղևորուիլը:

Սարգիս այս գլորանոցին մէջ ինք զինք ուսման տուաւ ամենայն եռանդեամբ, եւ երեք տարի եւ քիչ մ'աւելի հոն ձեռնալով՝ դասակիցները գերազանցեց, 23 տարեկան (1722) ձեռնագրեցաւ Կիւսասարկաւագ եւ Աւագ Սարկաւագ, եւ երեք տարի ետքը (1726) քննութիւն տալով՝ քահանայ ձեռնադրեցաւ եւ նոյն օրն՝

Բնկալեալ վեղար՝ սրբոյն Անտոնի ըստ ծիսի ազգիս՝ կրօնաւորի,
մշտեալ ընդ լծով՝ վանական կարգի:

Այնուհետեւ աւելի եռանդեամբ աստուածարանական ուսմանց հետեւեցաւ, Ս. Հարց գրութիւնները կարգաց եւ մասնաւորաբար քարոզչութեան հետամուտ եղաւ: Տարի մ'ետքը՝ 1727ին Կոլոտ Պատրիարք զինք անձամբ բարձրացուց վարդապետութեան փոքր եւ ծայրագոյն աստիճաններու: Սարգիս Ա. քիչ աստիճանն նշանաւոր քարոզչի հոչակ հանեց Կ. Պոլսոյ մէջ. թէ՛ մեծամեծները եւ թէ՛ հասարակ ժողովուրդը գունդագունդ իր քարոզները մօրկ ընելու կը փութային եւ զինք շատ կը մեծարէին. մինչեւ իսկ Կոլոտ Պատրիարք իր զբաղմանց պատճառաւ անձամբ քարոզչու միջոց չունենալուն՝ զՍարգիս Ա. իւր տեղը ֆարողէջ կարգեց:

Նոյն միջոցին Կեսարիոյ Առաջնորդը մեռած ըլլալով՝ Կ. Պոլսի հաստատուած Կեսարացիք յանուն իրենց քաղաքին Կոլոտ Պատրիարքին ներկայացան եւ՝ «կարի ստիպմամբ եւ մեծ աղաղակաւ» գլխաւոր Ա. իրենց Առաջնորդ գնել խնդրեցին: Սակայն Կոլոտ չուզելով զգուշ իր ֆարողէջն ընդգրկմացաւ Կեսարացեաց եւ հրամայեց որ ուրիշ մը գնեն: Կեսարացիք գողուած՝ աղքատագիր գրեցին Երուսաղէմի Գրիգոր Եղեթայակիր Պատրիարքին, որ Կոլոտի դասընկերն ու մանրիմն էր, որպէս զի ասիկայ միջնորդ ըլլայ

եւ զԿոլոտ համոզէ: Գրիգոր Պատրիարք գրեց Կոլոտին, որուն Կոլոտ չկրնար ընդգրկմանալ, զՍարգիս Ա. ընտրեալն՝ Կեսարիոյ Առաջնորդ անուանեց 1730ին, եւ արքունի հրովարտակ հանել տուաւ: Սարգիս Ա. քանի մ'ամիս ետքը մեծաւ շքով՝ «Մաթակ» (Կեսարիա) գնաց, հետեւ ունենալով իր մեծ դասակիցն Յակոբ Ա. Նալեան: 1731ին Կեսարիա հասաւ եւ ընդունուեցաւ մեծաւ հանդիսաւ: Քանի մ'ամիս ետքն ալ Նալեան Ա. եւս դարձաւ ի Կ. Պոլսի:

Սարգիս Ա. շատ գոհ ըլլաւ Կեսարացիներէր: Կեսարաւ Ս. Կարապետ Տօր վանքը պարտքերու տակ ընկճած էր: Սարգիս Ա. այն պարտքը քնշելու համար սկսաւ պարտիլ եւ ժողովուրդէն կամաւոր տուր ժողովիլ: Այլեւայլ անդերէն անցնելով Ատանա եկաւ, ուստի ի Բերիա (Հալէպ), եւ պէտք եղած դրամն հաւաքելով՝ իւր թեմոսը դարձաւ, պարտքը վճարեց: Քիչ ետքը Կ. Պոլսի գնաց՝ Էջմիածին երթալու եւ եպիսկոպոս ձեռնադրուելու համար:

Սարգիս Ա. թէ՛ Կ. Պոլսոյ Կոլոտ Պատրիարքէն պէտք եղած ընծայագիրն առած, եւ թէ՛ Երուսաղէմի Գրիգոր Պատրիարքին յանձնարարակներ, ճամբայ ելաւ Կոլոտ Պատրիարքն յանձնեց իրեն նաեւ՝ «սըկիհ ինչ ոսկեայ, գեղեցիկ պաշտօն եւ անդամադեայ» զոր ընծայ կ'ընէր Էջմիածին եկեղեցւոյն: Ճամբան ընկերացաւ Արարհամ Ա. Կրեւացւոյ, որ Թրակիոյ Ռեզիտանի (Ռոտմիթի) Առաջնորդն էր, որ նոյնպէս Էջմիածին կ'երթար ռուսիա, Երկուքը միասին Կարին հասան, ուր Սարգիս Ա. քանի մ'ամիս ձնաց. իսկ Արարհամ Ա. ճամբան շարունակեց, որմէ ետեւ Սարգիս Ա. ալ Էջմիածին հասաւ:


Յ.

Սարգիս Ա. Էջմիածին Սիմոնոսի մէջ Աքրահամ Կրեւացի Եպիսկոպոսը Կաթողիկոս ընտրել կու տայ: Կեսարիոյ Արքեպիսկոպոս կը ձեռնադրուի եւ «Երուսաղէմ», անուր կ'անուան: Աթոռը կը դառնայ 1735ին, ուրն տարին Կ. Պոլսի կ'երթայ եւ կը վերադառնայ: Ժողովուրդը կը հակադասի իրեն՝ կաթողիկեայ ըլլալուն համար, 1737ին Կ. Պոլսի կ'երթայ: Արքեպիսկոպոսութեան կոնդակին ընագրը, Կաթողիկեայ ըլլալուն պատճառն ու ժամանակը: Կովկաս Ա. Շարքերոցն եւ իր 19 կողոր մեծահասարակ Թարգմանութիւնները լատին հեղինակներէն: Սարգիս Ա. 1730էն յառաջ Կաթողիկեայ, իրեն համար 1732ին եւ 1740ին գրուած ձեռագիրք: 1743ին Կաթողիկէ դուանութիւն յղած է ի հոռո:

Սարգիս Ա. Էջմիածին կը հասնի 1734ին աշնան մէջերը՝ երբ Մշեցի կամ Խաջապի Աբրահամ կաթողիկոսը մահուան անկողինն ինկած էր եւ քանի մ'օրէն (11 Նոյ.) մեռաւ: Նոր ըն-

սրբութեան համար փութով սինհոդոս գումարուեցաւ, որուն մասնակցեցաւ նաեւ Սարգիս Ղւլիսիկայ Սինհոդականաց ընտրելի ներկայացուց Աբրահամ եպիսկոպոս իրեանցին, Թրաքիոյ առաջնորդը, որ տակաւին էջմիածին էր եւ ուխտը կատարելէն ետեւ մեկնելու կը պատրաստուէր: Սակայն սինհոդոսականներէն ոմանք հակառակեցան ըսելով՝ Թէ Աբրահամ օտար է, էջմիածնի միաբան չէ, եւ բնաւ նուիրակութիւն չունի չէ. այլք թէեւ կ'ուզէին զԱբրահամ, բայց նախ և Պոլսոյ Պատրիարքին իմացընէ կ'ուզէին:

Սարգիս Արքեպ. ձմեռն էջմիածին անցուց եւ յաճախ քարոզեց խուռն բազմութեան: Յաջորդ տարին 1735ին գարնան դարձաւ իւր թեմը, եւ նոյն տարին Կ. Պոլիս գնաց, Յովհ. Կոլոտ Պատրիարքէն եւ Ժողովուրդէն սիրով ընդունուեցաւ, եւ գտնելով իւր թեմը, Ժողովրդեան հոգեւոր պէտքերուն անխնայ խնամ տարաւ: Քիչ ետքը կեսարացիք տեսան որ իրենց առաջնորդը «Քաղկեդոնիկ եւ ուղղափառ» վարդապետութեան հետեւող է, եւ իրենց մէջ մեծ հակառակութիւն յուզուեցաւ իրեն դէմ: Սար-



Սարգիս Աբրահամը ընդունակութիւնները գովեց, ընտրութեան փութացուման պէտքը ցուցց՝ տեղւոյն քաղաքական գեպքերն յառաջ բերելով, եւ խոստացաւ որ ինքը այն ընտրութեան հաւանութիւնը կ'առնու. Կ. Պոլսոյ Պատրիարքէն, իւր վարժապետէն Ժողովը հաւանեցաւ, ընտրեց զԱբրահամ, եւ Աբրահամ կաթողիկոս օծուեցաւ Նոյ, 24ին Յաջորդ օրը նորընծայ կաթողիկոսն Սարգիս Ղ. օծեց Արքեպիսկոպոս, եւ անձամբ անունը դրաւ «Շնորհալի»: Այս ամէնը գրուած են եպիսկոպոսական ձեռնագրութեան վկայագրին մէջ, որ «Քառակնիք է եւ մեծագիր»:

գիս Արքեպ. երկու տարիէն՝ 1737ին Կ. Պոլիս մեկնեցաւ ըստ հրամանի Կ. Պոլսոյ Յովհաննէս եւ Նրուսաղիմի Գրիգոր Պատրիարքներու, որոնք զինք կանչեցին՝ Յունաց հետ խնդրոյ մ'առնելու իրենց օգնելու:

Աբրահամ կաթողիկոսի առած յիշեալ եպիսկոպոսութեան վկայական կոնգալն, որ Սարգիս Արքեպ. ի մահուանէն ետեւ իւր կենսագրին՝ Յովհ. Ղ. Նուբարիանի քովը կը գրանուէր, այսօրս կը պահուի Վիեննայի Միխիէական Հայոց Մատենադարանը (թ. 563, Տաշեան, էջ 1031), Այս երկայն կոնգալն (77 ամ. երկայն 42 ամ. լայն) շատ շքեղ գրուած է եւ

երկերեանդ մանրանկարներով զարդարուած, անգլիական գլուխը գրուած է Արարհամ Կաթուղիոսի կնիքը, զոր կը բառնան երկու հրեշտակներ, Հոս յառաջ կը բերենք կոնգրակն բնագիրն ամբողջ, դուրսը գնելով նաեւ Արարհամայ կնիքն նմանատիւը ²/₃ պզտիկցուած:

Յառի հաղար Եօթն հարիւր եւ երեսներորդ երորդի, Համարողութեան ըստ միջ մարդացիւնը բանին. եւ ի հաղար հարիւր, ութսուն երրորդ երորդի թուահաշուութեան աղինս Արամնի, Յաճախան նշաններին (ըստ հաճախեցոց) երկուց ասանց, եւ մեւ հնդից: Եւ ըստ հայագնեայցո՞ք ի Տրէի, աստեւ եւ Եօթն. Եւ՝ Յիսուսի քրիստոսի ծառայ, եւ կենսատու Աւետարանի նորին Պաշտօնեայ: Տէր Արարհամ ամենայն Հայոց Կաթուղիոս: Աթուակալ, որոյն թագէտի Առաքելոյն, եւ Հօրն մերոյ որոյ, Գրիգորի Լուսաւորչին: Եւ տեղապահ, երկնահանգեալ եւ քրիստոսանկար Գահին անպարտելոյ: Սրբոյ Էջմիածնի, Որեւ՝ տեղեալ եմ ի բարեկույն կղզոյն կրիտու. եւ աշխարհաւ, Մեծի Յովնէփոյ Աստուածարան Վարդապետի, ի Տէր Յանգուցելոյ:

Ընդհին, եւ ողորմութեամբ բարեխնամեց Տեառն Յիսուսի եւ հաճութեամբ Ամենաորդ Հոգւոյն ճշմարտի: Ըստ խնդրոյ ամենայն ժողովրդեան, եւ համայն ըստհայոց, եւ իշխանաց Մեծին կեարծիւ: Նա՛ւ ըստ յօժարեալն կամայ, եւ հաւանութեան, բազմաբնակի, եւ Սրբազան, Մեծի Պատրիարքին Կոստանդնուպոլսոյ: Տեառն Յօհաննէս Աստուածարան, եւ Գերբահանար Վարդապետ Եղբոր մերոյ: Զիւր հոգեանունդ, եւ սիրազուն որդեակն, եւ ի մանկութեան աշակերտեալ, զՏէր Սարգիս, Վարդապետ, զվարժն ի քրիստոսութեան Աստուածարանականս, եւ զհմուտն ի մակացութիւնս ասիականականս (չոր փորձի իսկ գիտեմք): Բարձրադասցար ի գերապատիւ աստիճան Արհի Եպիսկոպոսութեան: Ի վերայ Մեծի Աթուոյն, Սրբոյ Ղեւնդեայ, որ ի կապագովկացոց կեարծիւ: Եւ հոգաբարձու, եւ այցելու Սրբոյն Յօհաննէս Մկրտչի Դամբարանի, եւ նորին հրաշագործ նշխարոց, եւ այլ՝ պէսպէս սրբաշնութեանց, որք անդ կան հաւաքեալ: Ի պատհանութիւն եւ ի պարծանս աղբիւ մերոյ, Վասն որոյ գիտելով, եւ ականատես ելով իմ, թէ որքան թախանձանք, եւ ժառանգ ինդրեցին, կեարծիւն իշխանքն, ի մեծապատիւ յեղորէն իմեւ, զիւր հոգեանունդ Սարգիս Վարդապետ: Եւ եւս՝ թէ որպէս արդ, եւ մահար քրեալ յղեցին ի Սուրբն Սարգիս՝ առ սրբականիցող Պատրիարքն արթուն անուն՝ զբելով նման թէ՛ մեք բնալք՝ մեծա ինդրանք միշտ ինդրեմք, ի քոյ հարազատ եղբայր Քիւզանդեան Պատրիարքն, զեւ տացէ երկրի մերոյ Առաջնորդ զիւր սիրազուն որդի Սարգիս Վարդապետ: Սակայն նա ոչ բնալք մեզ՝ առ ի տալ, եւ թէ նա եւս՝ որպէս հարկաւորեալ քրեալ ի Սաղիմայ, առ ի կատարել զնշգրիւն նոցին: Ուստի յորժամ հարկաւորեցաւ, ի Մեծապատիւ յեղորէն իւրմ առ ի տալ նոցա

Առաջնորդ զվերո քրեցեալ Սարգիս Վարդապետ: Յոյնժամ կամեցաւ յղել զնա, ի Սուրբ Գոհոս, առ ի բարձրանալ ի պատիւ Եպիսկոպոսութեան, ի վերայ մեծի Աթուոյն, Սրբոյն Ղեւնդեայ, մեծադոյն բնայայլ: Քանի ի հայալ՝ արդեանց իւրոց եւ կերտել մին զուս սակեայ Սիհհ, ցմբխապապ, եւ յակնդակուս, մինչեւ ցատան քեռէ, յիշատակ Սրբոյ Էջմիածնի: Եւ յոյնժամ եւ եւս՝ Արարհամ ամենայն Հայոց կաթուղիոս՝ գեռ եւս՝ էր ի կոստանդնուպոլսի, եւ հանգերձալ էր գալ ի Սուրբ Էջմիածնի, առ ի յերկրպագութիւն Սրբոյ Էջմիածնի Տեղւոյն: Ուստի ի հանգիւղիւ այժմ պատշաճաւորութեան, եւ գիտողութեանս: Սրբազան Պատրիարքն Կոստանդնու վերո քրեցեալ, յանձնեաց առ իս՝ զիւր սիրազուն որդեակն, զեւ իւր, իւր փոխան Հայր լինելով ի Սուրբ Էջմիածնի, հրամանաւ իւրով ապցեմ՝ ձեռնադրել Արհի Եպիսկոպոս ի վերայ բոլոր կեարծիւ: Սակայն, իրաւի անհնար եւ ասել նախառահմանութեանն աստուծոյ, զեւ անգեղձք են կոչումն աստուծոյ: Քանի ի գալ, եւ ի հաւանել մեր ի Սուրբ Աթուոս, հանգեալ առ աս քրիստոս նախ քան զմեզ առաջ, մեր անուանակից լուսահոգի, Արարհամ սրբազան կաթուղիոսին: Եւ մեր նաւաստութիւն, կամեցուցութեան, եւ ընտրութեամբ ամենայնից, եւ հաճութեամբ Ամենաորդ Հոգւոյն ճշմարտի կոչեցաւ ի պատիւ Ժայռադոյն Քահանայապետութեան, ի Հայոց համարողութեան, Ուճ, 24, եւ ի նշաններին, Ի՞նչ: Իսկայն յեւ օծմանն իմ, ի միւսում աւաւր, ի նշն նշաններին ամնոյ, Ի՛նչ, յուսւր ասնի յալիւնեայ, եւ վարիւղհայ, ի մէջ Արքիեպիսկոպոս սրբանոցի Սրբոյ Էջմիածնի, ի յաւաք խորհրդում, ի ներկայութեան ամենայնից Եպիսկոպոսոց, եւ յաշակուտակ ժողովրդոց, բարձրացուցի ի գերապատիւ Աստիճան Արհի Եպիսկոպոսութեան, զՏէր Սարգիս Աստուածարան Վարդապետ, ի վերայ բոլոր կեարծիւ Առնելով զնա միայն, Անդրանիկ իմոյ Չեռնաբարութեան: Եւ ի ժամ, Սրբոյ Օծմանն իւրոյ, ի մէջ այն սարսափելի յառեւին, ի ներկայութեան բազմազանից Եպիսկոպոսոց, եւ ժողովրդոց, Պատկաւորեցին զնա նարագոյն մականունութեամբ, ըստ արդեանցն, եւ ըստ արժանաւորութեան, կոչելով զնա Սարգիս Ընդհին, վասն շնորհարուցի, եւ յորդառատ Սրբոյ բարեգութեան, եւ այլոց արդեանցն, զոր փորձի իսկ գիտեմք, նա եւ յայտն ամենայն օմեք, Վասն որոյ յայտնի լինի ձեզ ամենայն հայրական տոհմոյ, որք ի Գաւառս, ի Քաղաքս, Յաւանս, եւ ի Գիւղորեայ՝ կայք բնական: Աստուածարան, եւ բացառիւղ խորոյ խորհրդոց Տեառն Վարդապետաց: Արթուն անամբ գիտող Պանծալի Եպիսկոպոսաց: սրբանուէր, եւ երկնահարեւր Քահանայից: Ուղղաշաւիղ, եւ հաւանաւորեցաւ օտրիւապապ: Բարձրագ խաչին, եւ քրիստոսադեցալ կրօնաւորաց: Արթուն անամբ Տեառնալինակ պաշտօնեից, եւ եկեղեցական լրմանց, նաեւ, Արդաստեղիւն, եւ գլխիւց յոգնաբեղուն, Փարժամայ, ճարարարան, եւ յատենախոս Մեղիքներայ, Հաւատարմ, եւ իրաւազատ Ցանուորարոց, Հանձնարալահ, եւ իմաստուն

վաճառականաց։ Վայելլաւորեալ եւ աղնուակար Արուեստուորաց։ Ուղղակեալ եւ նշմարաւ վաճառորաց։ Քրեա ընդ երես, եւ վաճառականն Հողադործաց։ Ծաղիկեալ աւելց, եւ փառաբարձ ծերաց։ Պարիշտընից, եւ ուղղադէտք երկտաւարաւ։ Կատարունամբտ։ եւ Հպատակաբարդ Մանկանց։ Երկի դաշար։ եւ Համեատաղցը կառնաց։ եւ առ Հասարակ ամենայն յամենայնի, ի դասական իրա հետեւեալ։ եւ ի պէտքանց գործաւնութիւնս ընթացողաց։ Ըստ իւրաքանչիւր ախորժակաց։ եւ կարի, եւ ըստ աստիճանի։ Հաւատադէտք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս Աստուածն ամենայնի։ Ապաց։ եւ սերել Արամեականաց Հայկազունեայց։

Քառիգի, որպէս երկնային իմացական Քահանայապետութեանց կարգ։ որք են եւ երեակ Քահանայապետութիւնը. ունին (բոտ Սրբոյն Գիորնիսեայ) զառաջին. զվիշին. եւ զվերջին, զի որովհետեւ Սրբազան կարգ վերածայնին. ի հարկէ պարտին ունիլ զառաջին. զվիշին. եւ զվերջին։ Որոց առաջինքն՝ միջնացն. եւ միջինքն. վերջնացն. մատակարարեալ Հարբողին զաստուածային Լուսափայլութիւնն։ Որքն յայտարարութեն Աստուածաբանէ Գազարէն Աստուածաբանց. ի զիրս երկնային Քահանայապետութեանցն։ եւ նմանակէ եւս՝ որպէս օրէն է աշխարհին, զի իշխանութիւնը մարմնաւորք անդրանդանն ի հարց առ օրդիւ։ եւ եւս՝ որպէս յայտնապէս տեսնենք ի յանկաւր կարգս զորոյ ընտելեան. զի վերջինքն. եւ պարզեն. ներադգեն. ի օտորնային, եւ ի բազաղաբաւ՝ զներգործութիւնս զայտալեան։ Ըստ այոց օրինի. եւ յաւատարմութեան կարգաւորութեամբ, ի Սրբազան Եկեղեցւոյ Համանկատի սպեռնմն. եւ տարածումն. Լուսափայլութեանց, եւ շնորհացն աստուծոյ ի վերնադունիցն. առ սարնադոյնն. իբրեւ թէ ի զվերջին առ սարնադեալ անդամն վերահանգեալ։ Ըստ արքունի քնարերգութեան։ Որպէս իւր իշխանէ ի զլուրի. եւ ի մարտն Ահարօնի, եւ ի մարտացն իշխանէ ի գրապանս ըզգեստու նորա։ Որեւ յայտնապէս իսկ երեւի. զի ըստ բաղդաստութեան երկնաւորացն, եւ մերս եկեղեցական կատարողապետութեան կարգ տեսանիւ եւ նոյն նշույլք ճառագայթեալ երեւի յերկրաւոր Քահանայապետութեան Սրբադասպետութիւն. ներմարմնաւորութեամբ Որդւոյն միածնի։ Որով եւ գրէ թէ, զեր երկնապանծ գտաւ մերս զինուորեցեալ եկեղեցւոյ կարգապետութիւնն. զի ըստ Առաքելոյն Պողոտի՝ յեկեղեցւոյ ուսան զղոցմապատիկ զիմաստութիւնն։ Որ եւ յաւետագոյն տարածումն ի Քրիստոսէ սկզբնաւորեալ. մինչեւ ցայսօր. եւ ցյախտնիս վախճան ներգործի յամենայն ազգ. բրաւտեւելցն, աւանդօրէն պարզեմամբ միմեանց. Ըստ կարգի յառաջացելոց. յարժեանաւորութիւն Աստիճանի. եւ պատուոյն. ի վեհագոյն գլխոյ աստիճան. մինչեւ ի հուսկ պայտաւորն Արդ. վասն որոյ վերջապէս կրկին զայս ծանիք ամենեքին։ զի բաղձալի, եւ զգալով երկամբ ծնեալ զաւակն Պատրիարք Վարդապետ Եղօրս մերոյ, զՏէր Սարգիս Ընորհալի Վարդապետ Սրբազանգործե-

ցաք ի կարգս Եպիսկոպոսութեան։ Եւ եղաք իբրեւ զՏրագ ի վերայ առաժանիկ արդոյ եկեղեցւոյ. Լուսառու լինել ամենեցուն ոյք կարտին։ եւ Առաջնորդել որոց պիտայանայ։ Խրատել զտաւհարն. յուզողութիւն անել զյանցաւորս։ Եւս զիմանել զոչ երեւան յօրէնս Տեառն. հաստատել զգայթիակեան։ Կանոնել զդրբերայն։ Եւ որ ինչ վայելէ պաշտօնին իւր. առնել տառնք երկիւղի, եւ ձանձորանայոյ։ Մի ոք ինչ որ սմա հակառակ կայցէ. կամ ընդ զիմակ երեւեսցի։ Ջի դէպ ի սա հակառակօղքն. մեղ. եւ Քրիստոսի հրամանն են հակառակք. Կապեան ի սմանէ կապեալ, եւ արձակեալ, արձակեալ, Ըստ Քրիստոսի Պատարմութեան։ Պատուեսցի, եւ ընկալցի յամենեցունց. իբրեւ զԿառնանայ Քրիստոսի, եւ սիրեցի որպէս իւրաւայ նորա։ Ջի արժանի է մշակն վարձու իւրում։ Իսկ սա մշակ երկնաւորին է. ապա ուրեմն առաւելաբար պարտի բնութիւնի. բոտ որում վայելէ երկնաւորին։ Որպէս զի զուք ի պարտաց զերծանիցիք, եւ սա ըստ քանդարտաշահ ծառայիցն պատիկ ձեռք հանդերձ, մշակ առանց ամենից գտեալ, ասելով զՏէրս. ահա եւս եւ մանկունք իմ զորս ետուր զիւս։ Ուստի եւ լոյնց զերանագմայլ բարեաւան. թէ մուս յարախութիւն Տեառն քոյ. Ժառանգելով զանդաւ երջանկութիւնն, որ ի քրիստոս յիսուս ի Տէր մեր որ է օրհնակն ի բնակից զայնց. եւ յամենայն էից մշտնջնաւոր փառաւորութեամբ, յաւիտեանս յաւիտեանց. ամեն։

Գրեցաւ. Եպիսկոպոսութեան վկայական զիրս. ի Երեւազս Աթոռն ամենայն Հայոց Եկեղեցին. ի Ռ-Շ. ԼԳ. Թուով փրկին Մերոյ։

Կարելի չէ օրոշել՝ որ թուականն սկսեալ Սարգիս Արքեպ. յարած էր կաթողիկեայ վարդապետութեան եւ հասարակութեան, որոնք կը կոչուէին այն ժամանակ սհասաւալք, ծայթը, հերձուածողք, ակթարմալք՝ եւնւ Հաս հասաւական է որ արդէն Կոլոտի գրգռոյն մէջ սկսած էին իր մէջն արմատ ձգել կաթողիկէ վարդապետութեան սերմեր։ Կոլոտի գրական գործունէութիւնը (Կոլոտ, էջ 34—61) որ եւ ինքն իսկ հալածուեցաւ սվան ճանաչելուն նման (Յիշատակարան, էջ 189), անականապէս այս արդիւնքը յառաջ պիտի բերէր իր աշակերտներէն գէթ ոմանց վրայ. վասն զի անկապ իր քաջ թարգման Ղուկաս Ա. Խարրեբրդցւոյն, որ Հռոմայ Հաւատոյ տարածման Ուրբանեան Պապարանոյն աշակերտ էր, թարգմանել կու տար Լատին եկեղեցւոյն նշանաւոր եկեղեցականն Յիսուսան կրնաւորաց կրնական զըբերը։ Բարգէն Ա. (Կոլոտ, էջ 55) ըստ Հաննա Ա. Ի (Գիրք Պատմ. . . Եղմի. Կ. Պոլ. Գ. տպ. 1782) յառաջ կը բերէ Կոլոտի թարգման՝ Ղուկաս Ա. Խարրեբրդցւոյն

Թարգմանութիւնները, զորոնք չակերտի մէջ յառաջ կը բերեմ, վրան իմ կողմանէս յաւելուածներով:

1. "Գիրքն կենդանեաց եւ կամ Օրինակաց ի տանն Հատորս բաժանեալ, որոյ մի մասն նախապէս էր թարգմանեցեալ ի ֆլէշէ Նոյնոյ Ղուկաս վ. է. եւ զմնացեալն կառարեաց ի Կ. Պոլիս.": Այս գիրքն 1750ին ի վննետիկ տպագրեց (12×19 սմ. երկրէն, էջ I—XX եւ 1—1093) Սարգիս վ. Սարաֆեան իր անձնական ծախքովը, թէպէտ Սահակ վ. Բ. Տաթևի խոստացած էր ծախքը տալ, բայց յետոյ զլացած: Ասոր ձեռագիր մէկ օրինակը կայ ի մասնաձգարանի Ս. Էջմիածնի (Կարենեանց, Մայր ցուցակ, Թիֆլիզ 1863 էջ 230):

2. "Գիրքն Աստուածաբանութեան Սկզբնիկ Տրամաբանեալ ի Յովհաննիսէ Գաբրիէլեան, թարգմանուած 1729ին ի Կ. Պոլիս, ընդ Հովհաննա Ս. Կարապետ Եկեղեցւոյն որ յուսկիւսար: (Կը գտնուի յԱզգ. Մասնաձգարանի ի Կ. Պոլ. Ղալաթիոս, Ս. Լուսաւորիչ. 37×24 սմ. ձեռութեամբ, 1081 էրես) եւ 1792ին ընդօրինակութիւն մը ի մասնաձգարանի Ս. Էջմիածնի (Կարենեանց, անդ, էջ 7):

3. "Գիրքն եօթն խորհրդոց Եկեղեցւոյ":

4. "Գիրքն որ կոչի Լուսաւորութիւն խոստովանութեան", թարգմ. 1725ին. յԱզգ. Մասնաձգարանի ի Կ. Պոլ.: Կը գտնուի նաեւ յԷջմիածնի այլեւայլ օրինակներ, ըստ Կարեն. անդ էջ 41. "Կուլմանի վննետիկն" Լուսաւորութիւն խոստովանութեան... թարգմ. ի Ղ. Վ. Ե. Խարբերդցւոյ...":

5. "Գիրքն որ կոչի Անտառ այլաբանութեան, յերկուս հատորս բաժանեալ": Զեղեւնակ՝ Լեւոնիմոս Լաւուռէթօ. Ազգ. Մտգրնի. օրինակին ճակատի թուական 1733. Յիշատակարանի թուական՝ 23 Յունիս 1740, եւ Յիշատակարան 8. Գր. Քահանայն 29 Յունիս 1744. էջք 1826: Իսկ Էջմիածնի օրինակն երեւի նախնականն (Կարեն. էջ 3) "Անտառ այլաբանութեանց բոլոր սուրբ գրոց մեծագիր եւ չաղագիր երկու հատոր գրեալ ի թուղթ բամբակի, գրիչն սնայտ, բաժանեալ է յերկուս հատորս, արտրեալ է Լեւոնիմոս մականուանեալ Լաւուռէթօն 2ներվանիսիոյ կրօնաւորէ ի կարգէ Պենետիկան, եւ թարգմանեալ է ի Լասինականէ Ղուկաս վ. ի խարբերդցի, ի թուին Հայոց ՌճԱՎԸ 1728 (Հայ թուականին կը համապատասխանէ՝ 1719!) առաջին հատորն թարգմանեալ. երկրորդն ՌճԱՎ 1736, (1737!):

6. "Գիրքն իմն որ կոչի Պատմութիւն սրբոյ երկրին, յերկու հատորս", թարգմ. Ղուկաս վ. ի գործակցութեամբ Մաղաքիա Գպրի, թուական՝ 10 Օգ. 1725, Ա. Հար. էջ 547, Բ. Հար. 534. ՍԱԶԳ. Մտգրնի:

7. "Գիրք իմն որ կոչի Խարեւթիւն աշխարհի, յերկու հատորս", Թարգմ. Խաչերէնէ, Ա. Հար. թարգմ. 1730, Բ. Հար. 1734: Կոչուա Պատրիարք 1729ին արգէն իրրեւ թարգմանեալ կը յիշատակէ զայս (Կոչուա էջ 188):

8. "Գիրքն այն որ կոչի Զերմեանագրեանք", Բարբէն վ. ասոր մասին ոչինչ կը յաւելու: Այս գիրքն է "Ներածութիւն առ ընթերցանք կեննն Սրբոյն Քրիստոսի Սալեզացւոյ, թարգմանեցեալ ի Տալիականէ ի Հայս, ի Ղուկաս վ. Ե. Խարբերդացւոյ", զոր Սարգիս վ. Սարաֆեան տպագրեց ի վննետիկ 12 Մարտ 1748, որոյ մասին վարը:

9. "Գիրք իմն քարոզութեան ի վերայ ամենայն կիրակեցից բոլոր տարւոյն":

10. "Փիլիսոփայական գրեանք Կոմբաթի կոչեցեալ, այսինքն Ա. Հատորն որ է Լոճիգա, եւ Բ. ին որ է Ֆիզիկայ. իսկ Գ. ն եւ Դ. ն որ է Մեթաֆիզիկայ եւ Բարոյական, որք թերեւս ոչ են թարգմանեցեալ, այլ են կիսակատարք: Զոր յետոյ Է. վրթ. վ. Ասկերանն ամբողջագետ թարգմանած եւ տպած է ի վննետ. 1751:

11. "Փոքր գիրք իմն ի վերայ Հայր մերին": Ցես վարը Սարգսի հրատարակութիւն 1769 "Ծաղկոցիկ":

12. "Այլ իմն գիրք Նոյնչափ վասն զղման եւ ապաշխարութեան":

13. "Այլ մասնաւոր իրաժողով", որոնց կարգէն կը համարի Բարբէն վ. Ազգ. Մտգրնի. "Ներկրթութիւն ապաշխարողի, Խաչերէնէ, թարգմ. 1 Սեպտ. 1732, էր. 177. եւ "Պարտեզ հաւվուաց" Եր. 552: Սակայն առաջինը պիտի ըլլայ՝ "Կրթութիւն ապաշխարողի, զոր Սարգիս վ. Սարաֆեան "Նորապէս" թարգմանած է իտալերէնէ եւ տպած ի վննետիկ 1751ին:

Ասոնցմէ զատ Ղուկաս վ. ի թարգմանուած թիւններէն Զանօթ ան ինծի նաեւ հետեւեալք, զորոնք Հաննա եւ Բարբէն վ. Հին յիշատակեր եւ վերջնոյս բարձանքին հմմտ, (անդ, էջ 47, ծան.) այստեղ կը զննմ:

14. "Օգոստինոսի աղօթք միայնախօսութիւնք...": գրեալ ի Կ. Պոլիս ի Ղուկաս վ. Ե. ի թուին Հայոց ՌճԱՎ 1747: (Կարեն. էջ 2):

15. "Մեկնութիւն Ղեւտացւոց եւ Երկրորդ օրինաց, ի Յովհաննէս Գպրէ ի թուին

Հայոց ՌՃԶԸ 1739. Թարգմանեալ ի Ղուկաս Վ. Է Խարբերդցոյ, (Կարեն. էջ 144.)

16. «Պատմութիւնք երկուց մասանց յաշխարհի Ամերիկայի եւ Ափրիկայի, թարգմանեալ ի Լատին լեզուէ ի Հայ ի Ղուկաս Վ. Է Խարբերդցոյ ի Կ. Պոլս, յամի... ՌՃԶԶ 1727», (Կարեն. էջ 220.)

17. «Մեկնութիւն Յայնու թեան սրբոյն Յօհաննու, հեղինակութեամբ Հօր Գօռնելիոսի Գօռնելեան ի Լափոսայ, թարգմանեցեալ եղեւ ի Լատինական լեզուէ ի հայկական բարբառ ի Ղուկասու Վ. Է Խարբերթացոյ, ի խնդրոյ Տեսոն Յօհաննիսի Բաղեշեցոյ, (Ցաշեան, էջ 569—70), ձեռագիր երկսին 343 թուղթ։

18. «Կուռնելիոսի Մեկնութիւն թղթոյն Կորնթացոյ, հաւանական թարգմանիչ Ղուկաս Վ. Է Խարբերդցի (Ցաշեան, էջ 772—3)։

19. «Գրքուկ իմն վասն Նախասահմանութեան սրբոյն Թօմայի Հրեշտակարծե Վարդապետի, զոր ըստ ինքոյն Սարգիս Վ. Ստաֆեանի թարգմանեց Ղուկաս Վ., եւ զոր Սարգիս ապաժէ ի Վենետիկ, 20 Յունիս 1748 «Էփիմերոս», գրքին ետեւը իբրեւ Յաւելուած։

Գիտամբն ընտրուած այս գրքերուն ընթերցումը պէտք էթ որ հետզհետէ ազգեր հաւատալեաց վրայ եւ կաթողիկէ վարդապետութիւնն ընդունելի ցուցնէր ուսումնաստեմը ընթերցողներուն։ Սարգիս Վ. Հռոմայ Ս. Բահայայականին ներկայանալէն ետեւ՝ 27 Նոյ. 1745ին Հռոմէն առ բարեկիշտաակ Միկիթար Արքայն գրած նամակին մէջ, զոր քիչ ետքը պիտի հրատարակենք, կը գրէր թէ «Ներհոյսութեամբ իմ յաւելուած, մեղաբարդեալ եւ ճշմարտ գոյն ստեանց կաթողիկէ եկեղեցոյ Մօր մերոյ, բայց արգելիս փորձառութեամբ իբր ի յաղթեր լիութեան ճաշեցի զամենաբաղոյր փափկութիւն նորին... Աստանոր եղեկեղ վին առաջ կարդացի զինէն, որպէս երբեմն Սուրբ Օգոստինոս, զի յերկնոյն ծանեայ, եւն՝ Արդէն յառաջ քան զառաջնորդութիւն կեսարիոյ՝ որէ 1730, պէտք է որ ընդգրկած ըլլայ կաթողիկէ հաւատքը, քանի որ իր թիմը մանրուն պէտ սխաւ սոյն վարդապետութիւնները հետզհետէ յայնապէս քարգել նաեւ ժողովրդեան։ Ասոր կը վկայէ Անտոնեանց Մասնադարանի մէկ ձեռագրին (Թիւ ԿԵ) յիշատակարանը, այն է՝ «Քրա Պետրոսի Գովինիկեան կրօնաւորի Գիրք զատաստանաց թարգմանաբար հաւաքեալ», զոր գրած է 1740ին Սարգիս Վ. ի հետեւողներէն Աստուածաստ

քահանայն, որ կ'ըսէ. «Յիշատակարան... Յիշեցէ... զպոստանդնուպոլսեցի զերկոյս երանեալ Տէրն Սարգիս Էմորհայից Աստուածաբանութեան քաջ յարունապետն։ Ար մեծաւ յուսով եւ ինքնայծար կամօք եւ եռափափազ սքսիւ՝ եւ ընրմ սիրով ցանկացաւ եւ եռուր գրել զսա՝ աստուածային մարգարոսի՝ զոր Տէր Աստուած բարեաւ վայելել ասցէ ընդ երկայն աւուրբք։ Հուսկ յետոյ՝ անանցն ժամանեցէ ընդ երջանիկ առաքելոց՝ եւ երանեալ Հայրապետացն զատուորեցէ։ Ի թուոյն փրկչին (Գառնիկ Լուսին) եւ ի թուահաշուութեանս մերում ՌՃԶԶ։ շեռամբ կեսարացի մեղաբանութեամբ Կ. Աստուածատուր երէցս... յիշեցէ... զվերջոյրեցեալ զքաջ մեծ քարունապետն մեր, որ զառնացեալ ժամանակիս բերմանց՝ ներքին եւ արտաքին կրից, զոր Տէր Յիսուս ջահնջանելի պահեցէ ընդգէմ հերձուհոյց եւ հերետիկոսաց. անսպլմաքելի եւ անգրգուելի ի ծոց սուրբ եկեղեցեաց եւ ի պարծանս Հայաստանեաց...»

Դատիկեան Սեր. Վ., Արաշամ Արծիւեանի՝ Կիլիկիոյ հայ կաթողիկէայ Առաջին կաթողիկոսին խառնելէն Կեսարիականութեան մէջ (Գահիրէ 1862, էջ 68) կը յիշէ, որ Սարգիս Վ. իբր 1727ին Արաշամ Արծիւեանին, որ այն տոնն Բերիոյ (Հալէպ) Արքեպիսկոպոսն էր, հաւատք զաւանդութիւնը առաւ ըլլայ Նոյն դէպքը կը յիշէն Ռուսիական Մետրոպ. Վ. (անդ, էջ 134) իբր 1740էն ետեւ հանդիպած ի Վիւրման, եւ Աղեքսանդրեան Անդր. Վ., (անդ, էջ 16) որ 1737ին ի Բերիա հանդիպած կը գնէ։ Երեք թուականներն ալ սխալ կ'երեւան. վասն զի Սարգիս Վ. կեսարիոյ առաջնորդութեան ժամանակ միայն՝ Արեւիկ. ձեռնադրուելէն յառաջ, զնաց Բերիա 1732ին, որ ժամանակը կրնայ հանդիպած ըլլալ սոյն դէպքը։ Սարգիս Վ. այն միջոցին Աստանալ գացած է, ինչպէս վերն ըսինք, եւ անուշտ ինքն է հետեւեալ Յիշատակարանին մէջ յիշուած Սարգիսը (Մանգր. Աստ. Թիւ ԻԵ) Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի ի Գր. Ցաթեանացոյ գրեալ Աստանա ձեռամբ Թարգմանի գրչի «ի հայ-յաղեանս թուականի ՌՃԶԱ (= 1732) ապրիլի ԻԱ օրն... ի խնդրոյ դեռաբաղդոյ Սարգիս վարդապետի եւ եռամեծ բարուշի, զոր ստացաւ զսա իւր հալալ ստացուածովն եւ իւր անձին յիշատակ...» Նոյնին շարունակութիւնն է «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանի Իգնատիոս Վ. Է. Յիշատակարանը Նոյնպէս Թարգմանի իւրէն... ի խնդրոյ նորադրող Յովհանն

Տէր Սարգիս վարդապետին կոստանդնուպոլսոյ
իւր անձինն զոր Աստուած բարեւոք վայելուցն
արասցէ, քրեցաւ ի թուարբութեանս մերում
ԹՃԶԱ (= 1732) Նոյեմբ. ամսոյ ԺԷ...:

Սակայն իմ ձեռքս գտնուած պաշտօնա-
կան մէկ թղթոյ համեմատ՝ Սարգիս Հռոմայ
եկեղեցւոյ գաւառութիւնը պաշտօնապէս գրով
սուած է 1743ին, երբ Զմիւռնիոյ մէջ երու-
սաղեմայ համար նուէրներ կը հաւաքէր Սար-
գիս Արքեպ., ինչպէս պիտի տեսնենք, Իստանբուլ
լիվոնոյ քաղաքը վախճանած է, եւ իրեն վե-
րաբերեալ գրութեանց նրբոր կը պահուի Նոյն
քաղքին կաթողիկոսէջ Հայոց եկեղեցւոյն
դիւանը: Այս գրութեանց մէջէն հետեւեալ
խաւերէն սկզբնագիր վաւերութեամբ (Դիւ-
լիվ.) Նոյնութեամբ կը հրատարակեմ: Հռոմայ
Հաւատոյ Տարածման Ս. Ժողովոյ գահերէց
կարգինաւ կը գրէ 17 Օգոստ. 1743ին առ
Սարգիս Արքեպ. ի Զմիւռնիա, որ Ս. Բազա-
նայպետը եւ Ս. Ժողովը մեծապէս ուրախա-
ցած են, որ ինքը թողով մուրութիւնները՝
հաւատոյ գաւառութիւնը սուած է Զմիւռնիոյ
Առաքելական փոխանորդ P. Girolamo da
Perainoին ձեռքը, եւ թէ ընդունած է այս մա-
սին ղեկուած վաւերութեամբը, թէ անոր այս
քարի օրինակը շատ լաւ ապաւորութիւն պիտի
ընէ եւ պատու պիտի բերէ անաթոլիոյս եւն:

Ահա այս նամակս՝

Mto. Ill^o e Rmo. Mons. come Fratello.
Per le mani del P. Girolamo da Peraino
Vicario Ap^o. di colesia Città avendo la
Santità di Nr^o. Sig^o. e questa S. Cong. rice-
vuti i documenti, cò quali V. L. abbandonati
gli errori, e la Scisma della sua Nazione Ea
professato e professa la vera credenza, la
Unione colla S. Romana Chiesa madre e
maestra di tuttaa le altre, e la dovuta sugge-
zione al Romano Pontifice Capo Visibile della
medesima e Vicario del Fondatore di essa
Christo Nr^o. Sig^o. Ea la S^{ta} Sua non meno
che questi miei Rmi Collegⁱ provato piacere
non ordinario si per la particolare di lei
unione, che per il frutto, il quale può questa
arrecare presso, cotesti suoi Connazionali, i
quali e animati dal di lei Esemplio, e persuasi
nell' intelletto dalle efficaci Sue insinuazioni,
deve sperarsi che saranno per seguitarla in
un'opera così santa. Nel congratularmi per-
tanto seco à nome anche per parte di S. B^{no}.

e di questa S. Cong^a non solo della intra-
pesa vera credenza, che del sampo Sparioso,
quale se la offre di rendere frutti abbondanti
nella Vigna del Sig.^o posso assicurarla dell'
attenzione particolare, quale si avrà sempre
della di Lei persona, e delle sue convenienze;
e prego perfine il Sig.^o che perfettiam.^o la
prosperi.

D. V. J. Roma 17. Agosto 1743.
Come Fratello Altmo
V. Card. Atn. Pref.

Filippo Monu S. S.
Mons. Sergio Arciv. Armeno
di Cesarea / Smirne
Հասցէ՝ All' Ill^{mo}. Rmo. Mons.^o Fratello
Mons. Sergio Arciv. Armeno di Cesarea
Smirne.

Կ. Գոլիս Է. Ք. ՊԱՆԿԱՆԱՐԱՆԻ
(Շարժանութիւն):



Ս Ո Ս Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԻԹԵՐ ԳՅՈՒ ԳՈՏՈՍՏՈՆՆԻԳԻՐԷՆԻ ՀՈՏՈՏ
ՀԻՆ ԲՈՂՈՔՈՑԹԻՎԻՆ ԻՐԱՌԻՆԷՐ

(Ուսումնասիրութեան փորձ):

Հ Ա Տ Ո Ւ Ա Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն
Գ Լ Ա Ռ Ի Գ.

Հայոց Գործարարական Միութիւնը:

III.

(Շարժանութիւն):

Չնայած, որ նախարարական շրջանում
միանգամայն բացակայում էր օրենսդրական
գործունեութիւն ասած բանը, ինչպէս եւ
գրաւոր օրէնքների ժողովածուներ ու գաղա-
սանագրքեր, այնուամենայնիւ կարեւոր զգաց-
ում էր, որ անհրաժեշտ է որոշ իրաւարան-
կան գործողութիւնները գրաւոր ձեւով ար-
տայայտել: Այդ երեւոյթին հասկանալի է, եթէ
նկատի առնենք, որ հայերն շատ հին ժամա-
նակները տակաւին, ինչպէս յայտնի է Բաւնո-
փոնի, Հերոդոտի եւ այլ պատմագրների խոս-
քերից, առեւտրական սերտ յարաբերութիւն-
ներ ունէին Բաբելոնի, Ասորեստանի, փիւնի-
կեայի ժողովրդների հետ: Մեզ հասած պատ-